

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԾԻՍԱԳԻՏԱԿԱՆ	1-2
ՀԱՅՈՒՆԻ Հ. ՎԱՐԴԱՆ. — Պատմության հա- յոց Աղօթամատուցին (Շար.)	1
ՀԻՆՏԻԷ ԳՐԻԳՈՐ ԱՐԲԵՊՍԿ. — Ուսումնասի- րության «Գիրք Ձեռնադրության» մա- սին	23
ՊԱՏՄԱԿԱՆ	
ՔԻՐՈՍՏԵԱՆ. — Բարակ և Սահլ իսկ Մնրատ (Էջ մը մեր իննեքորդ դարու պատմու- թենքն)	9
ԳՐԱԿԱՆ	
ԵՐԵՄԵԱՆ ԱՐԱՄ. — Փշրանքներ Հայ աշուղա- կան գրականության (Շար.)	26
ՍԱԼՄԱՍԼԻԱՆ Ա. — Դարձեալ բանաստեղծին	32
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻԱՆ Հ. Ն. — Ուրիշ բանաստեղ- ծության մը ալ	33
ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Հ. ՎԱՀԱՆ. — Կարմիր Վար- դան	34
ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ Հ. ԵՓՐԵՄ. — Մահէս յետոյ	35
ԱՌՄԱՏԵԱՆ ՄԱՌԻ. — Ինտրայի յիշատակին	36
ԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ	
Հ. Ն. Տ. Ն. — Վարուժանի դարձեալ ՊԵՆԻ- թայի մէջ	39
Հ. Ն. Տ. Ն. — Հայաստանէն կուռնկներ	41
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ	
ՏԷՐ ՆԵՐՍԷՍԻԱՆ Հ. Ն. — «Մեծ եղեռնի նա- հատակի հայ բժիշկները», Տ. Բ. Գ. Մ. Կարոյեանի	45
ՔԻՐՈՍՏԵԱՆ Յ. — «Պատմութիւն Ֆարման ման- կան», հրատ. Շուշանիկ Նազարեանի	45
ՔԻՐՈՍՏԵԱՆ Յ. — «Ժ. Գ. դարի հայերէն ձեռ- գրերի յիշատակարաններ», Լ. Ս. Խա- չիկեանի	46

SOMMAIRE

LITURGIE	PAGE
HATSOUNI P. VARDAN. — Histoire du Bré- viaire Arménien (Suite)	1
HINDIE GREGOIRE ARCHV. — Etude sur le Rituel Arménien des Ordinations	23
HISTOIRE	
KURDIAN H. — Ezbak et Sahl ibn Snbat (Une page de l'histoire de l'Arménie au IX ^e siècle	9
LITTÉRATURE	
YEREMIAN ARAM. — Pages choisies de trou- vères arméniens (Suite)	26
SALMASLIAN A. — Nouveau plagiat	32
DER NERSESSIAN P. N. — Encore un autre plagiat	33
HOVHANNESSIAN P. VAHAN. — Vardan le Rouge	34
DER GHAZARIAN P. EPHREM. — Après ma mort	35
ATMADJIAN MARIE. — A la mémoire d'Indra	36
ECHO ARMÉNIEN	
P. N. D. N. — Varoujean revit en Belgique .	39
P. N. D. N. — Des académiciens de l'Arménie en visite à St. Lazare	41
RECENSIONS	
DER NERSESSIAN P. N. — «Les médecins ar- méniens martyrisés pendant les grands mas- sacres», du Doct. G. M. Garoyan	45
KURDIAN H. — «L'histoire de l'enfant Pharme», publiée par Ch. Nazarian	45
KURDIAN H. — «Les colophons des manu- scrits arméniens du XIV ^e siècle», de L. S. Khatchikian	46



1843-1958
ՀԺԶ. ՏԱՐԻ

ԹԻԻ 1-2

ՅՈՒՆՈՒՄԱՐ - ՓԵՏՐՈՒՄԱՐ

ԲԱԶՄԱՎԷ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ~ ԳՐԱԿԱՆ ~ ԳԻՏԱԿԱՆ ~ ԲԱՐՈՅԱԿԱՆ

Revue P A Z M A V E B

CXVI^e année, 1958, N. 1-2 Janvier - Fevrier

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀԱՅՈՑ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑԻՆ

(Շար. տես «Բազմավէպ» 1957, թ. 11-12, էջ 255)

ԳԼՈՒԽ Ժ.

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ՍՊԱՍՆԵՐԸ

1. Աւետարան. — 2. Խաչեր. — 3. Ժամա-
հար. — 4. Լուսավարութիւն. — 5. Ճրագ.
6. Կանքեղ. — 7. Լապտեր. — 8. Աշտա-
նակ. — 9. Մոմեղէն. — 10. Զահ. — 11 Բով
կրակի. — 12. Խնկանոց. — 13 Բուրվառ. —
14. Գրակալ. — 15. Բազմոց:

Ամէն աղօթատեղի ունէր քանի մը
պատաներ, որ հարկաւոր էին կամ բարե-
պաշտութեան, կամ պաշտամունքի վայել-
չութեան եւ կամ աղօթատեղիին պայծա-
րութեան համար, զորս կ'անցնէին թուել
ու նկարագրել. եւ զանոնք միայն՝ որ
կապուած էին ժամակարգութեան հետ:

1. Աւետարան. — Կը նկատենք հոս այս
մատենը ոչ իբրեւ ընթերցման գիրք, այլ
որպէս սրբազան ու մեծարեւի պատմ. մը:
Այսպէս երբ աղօթքը կը կատարուէր եկե-
ղեցոյ մէջ, աւագ սեղանին վրայ կանգուն
կը կենար միշտ այն, ինչպէս վը յիշէ Ն.
Կամբրոնացին, ցուցնելով սեղանը խորա-

նին մէջ, «եւ դնէին ի վերայ նորա գաւե-
տաբանն սուրբ, այս ինքն զՔրիստոս»
(Պար. 129). եւ զոր նիւթապէս առած ու
կրկնած է Գր. Տաթեւացին (Ամբ. 710),
հաստատելով սովորութեան տեւողութիւ-
նը եւ ընդհանրականութիւնը: Յիշենք որ
ուրիշ զարդ չկար սեղանին վրայ «զգե-
տէն» կամ աղնիւ սփռոցէն զատ, ինչպէս
յայտնի է լուսնեայն նաւակատիքի եկե-
ղեցոյ (ԺԱ. դարու Մաշտոցին մէջ) ու
Տարսնի առաջնորդին, եւ երկու մանրա-
նկարներէն 1248ի եւ 1263ի, զորս հրատա-
րակած ենք այլուր⁽¹⁾: Աւետարանը կը
ցուցադրուէր նաեւ հանդիսական օրերու
մէջ, ինչպէս պիտի տեսնենք:

Մեր հայերը կ'ախորժէին փրկական
պատգամներու այդ աղբիւրը զարդարել
գեղեցկազոյն կաղմերով, որով կը յաւե-
լուր սեղանին եւ եկեղեցոյն վայելչու-
թիւնն ալ: Պատմութեան մէջ ժամանակի
կարգով անոնցմէ ծանօթ են հետեւեալնե-
րը: Վրթանէս քերթող, Է. դարու սկիզբը

(1) Պատմ. հայ տարազին, 348, 381:

կը գրէ. «Ձտիպս աւետարանին տեսանեմք նկարեալս ոչ միայն յոսկումն եւ յարձաթոյ ալլ եւ յոսկերաց փոքուց եւ կարմիր մորթով կազմեալ»⁽²⁾: Արդարեւ կայ էջմիածնի աւետարանը 989ի, փոքուցեայ քանդակազարդ կազմով, զոր Ստրէլիկովսկի Ռաւեննական աշխատութիւն համարեցաւ 2. դարէն, եւ ապա ազուցուած նոյն դրչադրին⁽³⁾: Գր. Տղայ նուէր կը տառնայ Շրնորհալիէն աւետարան մը, զոր կը պնդէ յետոյ «գեղեցիկ մետաքսիւք եւ ակամբք պատուականօք»⁽⁴⁾: Ասկէ տարբեր կը թուի Սմբատի Տարեգրքին յիշած «գոսկեակազմ տուփ աւետարանին (նոյն) Տէր Գրիգորիսի, որ էր ակամբ եւ մարդարտով»⁽¹¹⁵⁾: Կոստանդին Ա. Կթղ. երկու աւետարան կը շնորհէ Անդրէասանց ու Փոսուխտերուն, կազմուած «ոսկեով եւ արծաթով»: Երրորդ մ'ալ ունի արծաթակազմ նշանաւոր, որ այժմ կը պահուի ի Նոր Նախիջեւան⁽⁵⁾: Կեռան թագուհիին աւետարանը զարդարուած էր «ոսկեով սրբով եւ երանդ երանդ գունիւք»⁽⁶⁾: Ասլանբէկ Մամիկոնեան, 1245ին, երկու մատուց կը շնորհէ Դուինի մէջ, եւ կը շնորհէ «մեծածախս աւետարան» ոսկեով եւ մարդարտով եւ ակամբք պատուականաւք զարդարած⁽⁷⁾: Եւ այսպէս ուրիշ շատեր, որոնց յիշատակութեամբ չեմ ուզեր տաղտուկ պատճառել: Հանրաժանօթ է աւետարաններու առ հասարակ պնդումը նաեւ մանրանկարներով, որոնց մասին շատ խօսուած է շատերէ, եւ մեզմէ եւս՝ Ս. Ղազարու գրչագիրներու նկատմամբ⁽⁸⁾ եւ բազմաթիւ պատկերներու յառաջընթացութեամբ:

2. Խաչեր. — ա. Անպակաս եղեր է միշտ տէրունական նշանը աղօթատեղիին մէջ. կ'ուզեմ ըսել անոնք՝ որ մեծարուելու

համար էին, եւ ոչ առ ի զարդ, բայց զնազանեալ է դրուած տեղը: 2. դարասորի վանականի մը կենսագրութեան մէջ յիշուի սեղանին վրայ⁽⁹⁾: Սակայն սփորական չէր այդ, եւ Մարտինցի՝ վերջութեամբ քննողաց աներեւոյթ կը ցուցայլուր մինչեւ Թ. դար⁽¹⁰⁾: Նոյնը կրնալ ըսել նաեւ հայկական սեղանի մասին, որու նկարագրութիւնը Ս. Սահակի տեսիլքին մէջ, Ղազարի մօտ, կը գտնուի խաչը վերայ խորանած եւ ծածկութեան» կառուարասկիզին, առանց տեսնելու նոյնը սեղանին վրայ⁽⁸¹⁾: Արաթանդեղոս կ'աւանդէ այլարանական խաչերու՝ նստասիւններու վրայ (555-56). «սիւնք մի մառ սեղանն... եւ խաչը ի վերայ նոցա» (565). այսինքն խաչակիր սիւն մը՝ իւրաքանչիւր սեղանի քով, որ կրնայ իրականին նմանութիւնն ըլլալ: Կը յիշէ նաեւ երեք խաչեր՝ զորս Լուսաւորիչ կը վանդն Հոսիսիմեանց երեք վկայարաններու խորաններուն մէջ, «ի տեղիս սեղանոյն»՝ ոյետոյ պիտի շինուէին (578), եւ շատ հաւանօթն խաչերն ալ անոնց քով պիտի դրուէին: Իսկ միջին դարուն զայն կը զըռնենք տեղափոխուած «ի մէջ սեղանոյն» ինչպէս կը վկայեն Օձնեցիին ընծայուած «Օրհնութիւն նորաչէն եկեղեցւոյ» (127) Յովհ. Եղնկացի⁽¹¹⁾ եւ Գր. Տաթևացի (Ամբ. 383): Պատարագէն դուրս՝ սեղանը շուրջանակի ծածկուած կը մնար նուարտաններով, ինչ որ տեւեց մինչեւ ԺԲ դար, ինչպէս գրած ենք այլուր⁽¹²⁾: Այդ ոճով Աւետարանն ու խաչ տեսանելի են ս. խորհուրդի մատուցման պահուն միայն: Այդու հանդերձ Յովհ. Մանդակունի՝ զգացուց «յանդիման սրբութեանցն» աղօթելու կարեւորութիւնը, որպէսզի ճանչնանք եւ մենք զայն, եւ իրաւունք տանք

(7) Ջալալեան Ա. 108:

(8) Բազմալեզու, 1935, 402:

(9) Կարբուլ, Գ. 3079:

(10) Մարտ. Բառարան քրիստ. հնութ. 71-72:

(11) Մեկն. Մատթէի, ԻԶ. 26:

(12) Պատարագամատոյց, 12-13:

վեղծ Դամասկացիին, որ կը մեղադրէր Հայոց աղօթելը դուրսը, չունենալով իրենց հանդէպ «ոչ մի ի նշանացն Աստուծոյ»:

Բ. Ըսինք՝ թէ մեր հին ժամատունները ընդհանրապէս զուրկ էին բեմէ ու պատարագի սեղանէն: Ասոր փոխարէն կար խաչ մ'ալ եկեղեցւոյն մուտքին քով, ծագումով հին, ինչպէս Զենոբայ յիշած «փայտեայ նշան տէրունական խաչին ի դուռն եկեղեցւոյն» Կարապետին, զոր կանգնած կ'ըլլայ սուրբ Լուսաւորիչն իսկ (36), կամ «զարքունադրոյմ նշանին բեւեռած... ի դուռն կաթողիկէին» Անիի՝ ըստ Լաստիփերտցւոյն, զոր աւերեցին Ասիականները (11): Ունինք Ս. Ղազարու 1216ի Մաշտոցի վկայութիւնն ալ, որ քահանայաթաղին մէջ կը գրէ՝ թէ ննջեցեալը «բերեն մինչեւ ի սրահ (գաւիթ) եկեղեցւոյն եւ դնեն առաջի խաչին»: Եւ յետ եկեղեցւոյ կարգին՝ դարձեալ «հանեն ընդ դուռն եկեղեցւոյն... եւ դնեն առաջի խաչին»: Կը հետեւի որ բոլոր եկեղեցիներուն յատուկ էր խաչը: Նոյնը կար եւ մեր դրացի Աղուաններուն քով, որոնց պատմիչը՝ Մովսէս Կազանկատուացի կը խօսի վեց անձերու մասին, որ Յունոյ եկեղեցիին կը գլխիւն, եւ նախ «մտին ի գաւիթ», ուր «արարեալ երկրպագութիւն առաջի խաչին» որ կար հոն, ապա «ի ներքս յեկեղեցին մտանէին» (44-45):

Այդ խաչը ի բնէ անկախ էր ժամատունէն, որ կառուցուելով եկեղեցւոյ մուտքին առջեւ, իր մէջ ունեցաւ զայն՝ իրբեւ մեծարելի սրբութիւն աղօթքի պահուն, ինչպէս կը զգացնէ Բազմադրեր երէցին օրինակը եւ Գր. Տաթևացիին յորդորը հաւատացեալներուն: Մեր 1284ի ժամագիրքը ունի աղօթք մը՝ Առ դրան սուրբ եկեղեցւոյ, որու բացատրութեանէն յայտնի է՝ թէ կը մատուցուէր ժամատան մէջ. եւ կը յարէ. «առաջի աստուածը նկալ սուրբ նշանացս խոնարհեալ երկիր պաղարեմք» Գրացնելով ուղարկութիւնը՝ զոր կը գրուէր խաչը ժամերգութեան առթիւ: Հետաքրքրական է կեղծ Դամասկացիին

միւս վկայութիւնն ալ, ԺԲ. դարէն, որ կ'ըսէ՝ թէ Հայերը «եքիս խաչս լծակցեալ կանգնեն ի ժողովարանս իւրեանց», որ այդ շրջանին ժամատուններն էին. «երկուս միաչափս եւ մին փոքր եւս, եւ սուրբ Երրորդութիւն կոչեն»⁽¹³⁾, ինչ որ կը կրկնէ ըստ իմաստին՝ ոչ ըստ տառին՝ նաեւ նշանաւոր Նիկոլի ընծայուած ամբաստանագիր մը, որմէ կոչումներ ունի Կղ. Գալանոս (Ա. 214): Երեք թիւը հին կամ ընդհանուր չէր անշուշտ, ինչպէս աւանդական մէկը, որ անկասկած մնաց անշարժ:

Գ. Կային եւ փոքր կամ ձեռքի խաչեր, որ կը կիրարկուէին հանդիսական օրերուն՝ արարողութեանց պահուն: Այսպէս 1284ի Աւետարանացոյցը, Տեառնըդառաւի նախատեսակի թափօրին կը գրէ՝ թէ «զնշան տէրունական խաչին տան ի ձեռս քահանայի միոյ կամ երկուց» Եւ Զատիկի ճրագալոյցին՝ թէ Դանիէլի հարցին «տան խաչս երկուս... ի ձեռս քահանայից»։ Նըմանապէս «խաչիւք» կը նշանակէ Ծաղկազարդի, Զատիկի, Համբարձման, Վարդապետի եւ Փոխման թափօրները, որոնց մասին առանձին պիտի խօսինք: 1438ի եւ յաջորդ Տօնացոյցները ասոնց վրայ կը յաւելուն Աշխարհամատրան, Երեւման Սաղի, Բ. Ծաղկազարդի, Հոգեղալստեան ու Սաղիւրացի թափօրներն ալ, բայց խաչերը մէկի վերածելով, «խաչիւ», որով կ'օրհնէին աշխարհի չորս կողմերը:

Այդ խաչերէն հանդիսապէս կը դուրսէր մեծ օրերուն նաեւ բազմոցի վրայ, ինչպէս պիտի տեսնենք:

Սաչերը կը շինուէին ամէն նիւթերէ: Մտ. Ուռհայեցիին կը յիշէ «զնշանս տէրունական փայտից եւ քարանց»: Անիի պեղումներուն մէջ յայտնուեցան «արոյրեայ եւ պղնձեայ խաչեր... հասարակ եւ աւելի բարդ՝ գեղարուեստական»⁽¹⁴⁾: Գաղիկ Արծրունի, կը գրէ Թովմա, կը զարդարէ զՍ. Գէորգ «ընտիր եւ փորձ արծաթագործ» խաչերով (284): Եւ Սմբատի տարեգրքը

(13) Լոյս տա. 1906, 215:

(14) Արարատ տա. 1911, 662:

(2) Յաղագս պատկերամատոյց. դրչ. Ս. Ղազարու:

(3) Աւետ. էջմիածնի, 21-45:

(4) Հաւաք. յիշատակարանաց:

(5) Ազգագրական Հնդ. ԻԳ. 63-64, 76:

(6) Անահիտ Հնդ. 1907, 202:

12951-58



կը յիշատակէ «գմեծ խաչն ոսկեղէն» պարոն Վասիլի, եւ Գր. Տղայի շինածը, որուն վրայ յետոյ էին «ակունս եւ մարգարիտս շատ» (115):

3. ա. Ժամահար. — Աղօթահարաւէր դործի մէջ, յիշուած նախ է. դարուն, ՅՀ. Մամիկոնեանէ, զոր կը հնչեցնեն կրօնաւորները Մամիկոնեան Վահանի պատեւրազմին մէջ (50). ապացոյց՝ թէ արդէն եկեղեցական սպաս մէջ: Եւ ապա Գր. Նարեկացիէն (Աղ. ՂԴ), Մաքենաց իւրապէսներէն (Յաւ. Ա.), Բ. կեղծ Օձնեցիէն (109) եւ ուրիշներէ՝ իրեւ կոչնակ հաւատացեալները եկեղեցի հրաւիրող: Այս սովորութիւնը Զ. դարէն աւելի հին չէ արեւմտաքրիստոնէի մէջ, նաեւ Յոյներուն՝ որ սկսան ժամահարով նոյն դարէն, ինչպէս կ'ապացուցանէ Հ. Լիւերկ(15), եւ մեղի ալ տուին: Տախտակեայ հնչուն շերտ մէջը ըստ նկարագրութեան Նարեկացիին, զոր կը բախէր քակաղաղ կամ փայտեղէն մուրճ մը, ինչպէս կը կոչէ Գրիգոր Տղայ՝ Երուսաղէմի ողբին մէջ: Միջին դարուն զայն կը շինէին նաեւ երկաթէ, ինչպէս կրկին նիւթերէ էր յունականն եւս. եւ Գր. Տաթեւացի կը վկայէր՝ թէ ունէին «ժամահարս յերկաթոյ եւ ի փայտէ» (Զմր. 8):

բ. Զանգակ. — Յոյները Թ. դարուն ընդունեցան զանգակներն ալ(16), որ տասներորդին զեռ չեն հասած Հայաստան, եւ Նարեկացիին խորշումով մը կը յիշէ զայն՝ համեմատութեամբ ընտանի կոչնակին, որ «ոչ (էր) զանգակ նիւթոյ պղնձոյ զանգալեցուցեալ»: Սակայն անկէ վերջ մտած է մեր քով զանգակն ալ, եւ Մաքենաց իւրապէսներուն համեմատ՝ արդէն կիրարկութեան մէջ է ԺԲ. դարուն. եւ թուով աւելի քան մէկ, ինչպէս ժամահարն ալ. որով հարկանել կու տան «զգանկալսն կամ ըգժամահարսն»: Անոր համար կամ, որով-

հետեւ զեռ ընդհանրացած էր. այնպէս որ 1232ին Բրուկարդ, ուղեւոր ի Կիլիկիա՝ չէր տեսներ զայն, եւ կը գրէր՝ թէ Հայերը «կը զգացնեն բոլոր վանոնական ժամերը՝ տախտակ մը կամ ուրիշ փայտի կըտոր մը ծեծելով, որովհետեւ զանգակ չունին»(17): Աւելի ուշ կը հանդիպինք Տաթեւի երկու զանգակներուն՝ 1302 եւ 1304 թուականներով(18): Սովորական կը թուի այդ երկու թիւը, դատելով Տաթեւացիին ակնարկութենէն, որ Մովսէսի զոյգ փողերուն հետ կը համեմատէ «ղերկու զանգակս» եկեղեցւոյն, «կամ զզանկակն եւ զժամահարն»՝ իրեւ տեսակ, «կամ զփայտէն եւ զերկաթին»՝ իրեւ նիւթ կոչնակին (Հրց. 618), ըստ որում, վերջին իսկ, «զանկակն յարծաթոյ եւ ի պղնձոյ խառնեալ» էր (Զմր. 8):

գ. Զանգակատուն. — Ժամահարը անշուշտ կը զարնուէր ի սկզբան բարձր տեղէ մը: Եւ երբ զանգակն ընդունուեցաւ, գուցէ եւ նախ քան զայն, հարկ եղաւ շինել զանգակատուններ, նախ եկեղեցիին տանիքին վրայ, եւ ապա առանձին: Ինծի յայտնի հնագոյնն է Աշոտ Գ.ի դստեր Հովսիսիմէի կտակագրին յիշածը 981ին՝ այսպէս «ի գլխոյ զանգակատան վանիցո մերոյ սբ. Յովհաննէսին» Մաղարդայ(19): Ապա կան ուրիշներ աւելի յետնադոյն: Որով Տաթեւացիին 1410ին վրնար գրել՝ թէ «ի բարձր տեղուցէ զանկակն կախեալ» է (Զմր. 9): Նշանաւոր է Հաղբատայ զանգակատունը 1245էն, Համադասպ Եպիսկոպոսի ձեռքով, «հրաշալի շինուած, . . . յարմարեալ ի նմին եւ եկեղեցիս» ըստ Կիրակոսի(65), ուր էին «եօթն խորանք» ըստ յիշատակարանի կառուցողին(20): Ժամահարի եւ զանգակի վրայ այլուր աւելի ընդարձակօրէն խօսած եմ(21). իսկ կիրարկութեան եղանակին նկատմամբ՝ աշխատութեանս Բ. մասին մէջ:

(15) Կարբուլ, Գ. 1968, 1970:

(16) Անդ. 1971:

(17) Հայրենիք մամ. 1933, 139:

(18) Ալիշան, Սիսական, 236:

(19) Ալիշան, Հայկարանք, 2, 16:

(20) Բժշկեանց Հ. Մ. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, 78:

(21) Բագմավէպ հնդ. 1910, 193:

4. Լուսավառութիւն. — Ծանօթ են մովսիսական խորանին եօթնճրագեան աշտանակը, եւ Սողոմոնեան տաճարին տասը աշտանակները: Նմանապէս «լապտերք մէջ, ուր Պողոս Առաքեալ եւ հաւատացեալները խմբուած էին զիշեր մը»(22): Տիեզերական եկեղեցին հետեւեցաւ այդ օրինակներուն, եւ շարունակեց միշտ լուսավառութիւնը՝ հասարակաց աղօթքի եւ այլ արարողութիւններու մէջ(23). կը բաւէ յիշել վկայութիւնը Եթերիայի, թէ Երուսաղէմի Յարութեան տաճարին մէջ, երեկոյի ժամերգութեան պահուն, «վառին ամենայն կանթեղք եւ մոմեղէնք, եւ լինի լոյս անբաւ» (373). նոյնպէս եւ առաւօտուն՝ զեռ շրջապատ՝ «անօթք լուսատուք կարի յոյժ շողողեն», կ'ըսէ (517). եւ դարձեալ թէ «ո՞վ կարիցէ զինս հատանել կամ պատմել զթիւ եւ զկշիռ մոմակալաց, կանթեղաց եւ ճրագաց»՝ որ կային Յարութեան, ինչի եւ Բեթղեհեմի տաճարներուն մէջ (518): Նոյն ճիւղութիւնը կը պատմեն մեղի ուրիշ բաղմամբիւ վկաներ ալ ուրիշ եկեղեցիներու մասին: Տարբեր կերպով չէր կարող վարուիլ նաեւ հայ եկեղեցին, եւ առաւ նոյն սովորութիւնը իր գոյութեան սկիզբէն: Աղաթանգեղոս կը յիշէ Հովսիսիմեանց նորակերտ վկայարաններու զարդարումը Հայերու կողմէ «ոսկիներու զարդարումը Հայերու կողմէ» եւ արծաթի կանթեղամբք լուցելովք, եւ լապտերք վառելովք եւ աշտանակօք բորբոքելովք» (570): Ս. Սահակի կանոնները բոքելովք» (570): Ս. Սահակի կանոնները կը պատուիրէին քորեպիսկոպոսներուն՝ որ կը պատուիրէին քորեպիսկոպոսներուն՝ որ «զտաճարս աղօթիցն . . . զարդարուն պահացն անխափան լուցմամբք» (Ա, ք): Մանդակունի հայրապետը լաւ կը ճանչնար «ի տանն Աստուծոյ . . . զպայծառութիւն լուսոյն» (202): Դուրին 645ի Ժողովին կանոնները կը պատուիրէին Եպիսկոպոսին՝ խրատել եւ ուղղել որ «զլոյս . . . եկեղեցւոյն խափանեցէ» (Ե): Ղեւոնդ կը յիշէ Բագմուանու Ս. Գրիգորի լապտերներ-

ուն պայծառութիւնը, «որովք զգիշերն որպէս զտիւ լուսաւոր առնէին» (21): Այսպէս կը շարունակուին վկայութիւնները մեր նախնեաց գրութիւններուն մէջ, եւ պիտի տեսնենք շատերը՝ լուսատու անօթքներուն նկարագրութեան մէջ՝ ստորեւ: Բայց կ'արժէ յիշել հոս Ստ. Ասողիկի վրկայութիւնը՝ թէ Կատրանիտէ թագուհին Անիի կաթողիկէն կը զարդարէ «բաղմապայծառ լուսատու անօթք վայելչութեամբ . . . ըստ երկնային կամարին կաթողիկէն սուրբ» (248): Մեր վարդապետներէն ոմանք ճրագի լոյսին խորհրդաւոր մեկնութիւններ ալ տուած են, որ մեզ չեն հետաքրքրեր:

Երկու տեսակ լուսավառութիւն կարմէկը մնայուն, որ էր մշտավառ կանթեղ մը, ի հնուց ծանօթ ամէնուրեք, զոր Եթերիա ուխտաւորուհին տեսաւ Երուսաղէմի Յարութեան տաճարին մէջ եւս, եւ կը գրէ՝ թէ երբ բոլոր ճրագները պիտի վառէին, «չաժի լոյս արտաքուստ. այլ հանեալ լինի ի ներքին այլէ անտի, ուր զցայգ եւ գտիւ ցանգ շողողէ ճրագ» (513): Այսպէս եւ Ս. Պաղղինոս Եպ. Նորայի, մեռած 431ին, կը յիշէ նոյնպէս զիշեր ու ցերեկ մշտավառ «լոյսը»(24): Այս սպասին նկարագրութիւնը պիտի տեսնենք մեր 8 համարին մէջ: Ասոր կ'ակնարկէ եւ կարծեցեալ Օձնեցիին Բ. ճառը. «հանապազօրդ վառումն լուսոյն, (որ) զմշտալոյս պայծառութիւն արդարոցն ցուցանէ» (140), եւ որուն հետ կը համաձայնին մեր նախնեաց յիշեալ վկայութիւններու «անխափան լուցմունքն» ալ:

Իսկ միւսը՝ ժամերգութեան պահուն, ինչպէս կը գրեն Մաքենաց իւրապէսները, եւ որու նպատակն էր լուսաւորել աղօթատեղին, ինչպէս չորս դար առաջ կը զգացնէր ՅՀ. Իմաստասէր, գրելով երեկոյի աղօթքի մասին՝ թէ «արեգականն լուսով մինչեւ ցայնժամ լինին պայծառացեալ. իսկ ապա զերկրորդն՝ որ աղօտաճանչն

(22) Եւք, ԻԵ, 31-39. Գ. Թաղ, է, 49. Գործք, Ի, 8:

(23) Կարբուլ, Գ, 1726:

(24) Կարբուլ, 2, 3:

է՝ ի ներքս ածելով լոյս» (22), որ ուրեմն նախ քան այդ ժամը չէր վառեր: Նմանապէս կեղծ Օմնեցին կը դնէ «ի տաճաներորդ ժամուն լուցմունք ճրագաց» (96), եւ ոչ առաջ: Նոյնպէս եւ Մաքենեաց Խրատները վառել կու տան «զամենայն ջահք եւ ըզկանթեղքն» Գիշերային եւ Երեկոյեան ժամերուն միայն: Իսկ ցերեկի վրայէն լուսթեամբ կ'անցնին (Յաւ. Ա.), ինչ որ ինքնին պերճախօս է: Այսպէս էր սովորաբար եւ միւս եկեղեցիներուն մէջ: Զոր օրինակ, Եթերիա՝ որ Երուսաղէմի տարեկան բոլոր պաշտամունքը կը նկարագրէ, եկեղեցւոյ լուսավառութիւնը կը կապէ միշտ մթութեան հետ⁽²⁵⁾: Եւ Ս. Հերոնիմոս պատասխանելով Վիդիլանտիոսի ամբաստանութեան՝ թէ քրիստոնեաները ցերեկն «անբաւ մոմեղէնս վառեն», կ'ըսէ՝ թէ կը վառուին «յորժամ աւետարանն ընթեռնուցու»⁽²⁶⁾, յայտնապէս զգացնելով՝ թէ այդ առիթէն դուրս լուցմունք չէին ըլլար լուսաւոր ժամերուն: Բայց կարելի է՝ թէ չքեղութեան համար վառողներ ըլլային, ինչպէս եւ պատարագի ժամանակ: Իսկ լուցման արարողութիւնը կը կատարուէր խարոյկով մը, ինչպէս կը կոչէ Լամբրոնացին. «Ջահս՝ որ ի խարուկէն լուցեալ՝ բորբորեալ արծաթի» (Պար. 132):

Ուշադրութեան արժանի է եւ լուցման վայրը: Ն. Լամբրոնացին կը դրէ՝ թէ եկեղեցին խորանին մէջ դրաւ պատարագի սեղանը, «եւ արտաքին՝ զխուսկան եւ զաւանակս լուսոյ» (Պար. 146): Հին ճառը «Խորհուրդ եկեղեցւոյ»՝ նոյն զաղափարը կը կրկնէ հետեւեալ բացատրութեամբ. «Յեկեղեցի արտաքին վարագուրին վառին ջահքն եւ կանթեղքն՝ ի նմանութիւն լուսաւորացն» (487): Բայց չեն հերքեր բացառութիւնը յիշեալ մշտալոյս ճրագին, որ սկիզբէն ի վեր կը վառէր խորանէն ներս, եւ զոր միւսներուն հետ կը յիշէ «նաւակատիք եկեղեցւոյ» եւս, ընծայուած Յ. Մանդակունւոյ, թէ յետ օծման՝ «վիճա-

կեալքն լուցանեն զկանթեղսն. նախ եղիսկոպոսն զխորանին, եւ այլքն արտաքին», ինչպէս կը կարդանք մեր ԺԱ. դարու Մաշտոցին մէջ: Անոնք զետեղուած էին կամ կախուած որոշ բարձրութեան մը վրայ, «ի մէջ ձեղուան եւ յատակի»՝ ըստ Եղնիկի (14), որպէսզի անխափան սրբութիւն իրենց լոյսը:

Մենք յիշեցինք անցողաբար լուսատու անօթները, որոնք ճշտուելու կը կարօտին՝ ըստ անուան եւ ըստ իրին, եւ որուն կը ձեռնարկենք այժմ: Հայոց մէջ ծանօթ էին Ե. դարուն, եւ անցան նաեւ յաջորդներուն՝ ձրագ, կանթեղ, Լապտեր, Աշտանակ, Մումեղէն, Ղամբար ու Զահ:

5. ձրագ. - Թարգմանութեանց մէջ հոմանիշ է յուն. լիւֆնոս եւ լտ. լուկեռնա բառերուն: Փոքրագոյն եւ ամէնուն ընտանի սպասն էր՝ պէսպէս ձեւերով, բայց սովորականը փոքր ինչ ձուլած եւ տափարակ. մէկ ծայրէն կոտուցը՝ ձիթավառ պատրոյգով, եւ միւս ծայրէն բռնատեղը⁽²⁷⁾: Ռամիկին կիրարկածները խեցեղէն էին, բայց կային նաեւ մետաղեայ ճրագներ: Այս նրագներն էին Մովսիսական աշտանակին վրայ դրուածները, կոչուելով նաեւ նրագարանք, եւ մերթ երկու բառերը միասին դորձածուած են միեւնոյն տուներու մէջ եւ նոյն յունարէն բառին դիմաց⁽²⁸⁾, անշուշտ խուսափելու համար կրկնութենէ: «Ձրագարան լուսոյ» կը կոչէ նաեւ Յաճախապատումը (117): Մովսէսի պատուիրածներն ոսկեղէն էին՝ աշտանակին պէս⁽²⁹⁾:

Նոյն անօթը (լուկեռնա) տեսաւ Եթերիա նաեւ Երուսաղէմի սուրբ վայրերուն մէջ, ինչպէս ունէին բոլոր քրիստոնեաները: Որով հայ եկեղեցիներուն մէջ ալ կային ասոնք, ըստ վկայութեան Եղիշէի՝ թէ փշտիականաց կանայք կը մարէին «ըզճրագունս եկեղեցւոյն»: «Զճրագունս»

(27) Դարեմբ. Գ. 1320-1339. Կարբուլ, Բ. 1086:

(28) Ղեւո. ԻԳ. 4. ԵԼԲ, ԼԹ, 36. ԹԻԼԲ, Բ. 2:

(29) ԵԼԲ, ԼԵ, 17:

այդպէս միայնակ՝ անշուշտ ընդհանուր բացատրութիւն մըն է, որով հասկնալու ենք միւս տեսակներն ալ, ինչպէս նոյն օճով Յ. Իմաստասէրն եւս «զնրագացն օրհնութիւն» կը կոչէ Լոյս գուարքը, եւ «ըզնրագացն զեցուրդ» Օրհնեալ տէրը (27, 22): Իսկ Ս. Սահակի տեսիլին մէջ՝ Ղաւարի քով՝ Աւագ հինգշաբթիի պաշտամունքի պահուն խառն են «լոյս նրագացն եւ կանթեղացն, (որ) առաւել տոչորեալ բորբորէր» (80): Անկասկած՝ եկեղեցիներէն ըստ ճրագներն աղնիւ մետաղէ էին, զէթ չարուստներու նուիրածները, ինչպէս վերկայուած է միւս լուսատու անօթներու համար:

Ի՞նչ իւր կը վառուէր ասոնց մէջ: Հայաստանի ցուրտ օդը չէր նպաստեր ձիթեհիններու առատօրէն մշակութեան, որու համար միւսոնն անգամ ուրիշ նիւթերէ կը պատրաստէին, կ'ըսէ Ն. Շնորհալին՝ Աւագի ուղղած նամակին մէջ (91): Մեծաւորին իրաւունքով ուրեմն կրնար վկայել Միս. Գոշ իր Առակներուն մէջ՝ թէ «նիւթ լուսոյ» կը հանէին կտաւատէ, կնճթէ եւ ընկոյղէ (Խ. ճէ): Իսկ Միսիթար Ապարանեցին, ԺԴ. դարուն, կը դրէ՝ թէ Հարանեցին, ԺԴ. դարուն, կը դրէ՝ թէ Հարանեցին «ոմանք վառեն մոմ, ոմանք ձէթ, ոմանք ճարպ, ոմանք նաւթ» (ԽԵ. իէ):

6. Կանթեղ. - Լատինայոյն կանդելա բառին փոխառութիւնն է, որ բնագրին մէջ կը նշանակէր պատրոյգ կամ լար՝ օծուած դիւրաւառ նիւթերով, մոմով, ճարպով կամ ձիւթով⁽³⁰⁾. Ջահին մէկ տեսակը: Նոյն իմաստն ունէր անշուշտ նաեւ մեր քով, արտաքին կիրարկութեան մէջ. ինչպէս երբ Աղաթանգեղոս կը պատմէ՝ թէ Հոսիսիմեայ մարմինը կ'այլէին «հրով կանթեղացն» (155), մինչ տակաւին չկային Հայերու մէջ եկեղեցիներ ու մետաղեայ կանթեղներ: Կամ թէ «կանթեղօք» կը եայ կանթեղներ: Կամ թէ «կանթեղօք» կը յուղարկէին ննջեցեալները, ըստ Փաւստոսի (229), ինչպէս Եղաւ եւ Վրթանէսի (28), Ներսէսի (218), եւ Մաշտոցի՝ ըստ

Կորիւնի (27). եւ ուր աւելի յարմար էին ջահակերպները քան մետաղեաները, որ հովին պիտի չտոկային:

Սակայն նոյն բառը հայերէնի մէջ այդ երկրորդ նշանակութիւնն ալ ստացած էր հինէն ի վեր, ակնհերեւ Աղաթանգեղոսի վկայութեան մէջ, «ոսկի եւ արծաթի կանթեղօք», որ կախուած էին եկեղեցիներու ներսը: Նոյն իմաստն ունի բառս նաեւ Եթերիայի գրչին ներքեւ՝ Դ. դարու վերջերը, ուր նա Երուսաղէմի Յարութեան ու Խաչի տաճարներուն մէջ կը տեսնէր «կախեալ ամենայն ուրեք բազում եւ մեծամեծ կանթեղք (կանդելաք) ապակեայք» (514). նոյն ծանր անօթը, բայց փոխանակ մետաղի՝ ապակեայ: Նաեւ Աւագ հինգշաբթիի գիշերային թափօրին մէջ կը տեսնուէին նոյն «կանթեղք եկեղեցականք իբր երկերիւր» (529), որոնք դիւրատար եւ առաջիններէն տարբեր տեսակ մը ըլլալու էին: Նոյն կոչումը կը յարատեւէ մեր քով, եւ Սահակի տեսիլին մէջ Վաղարշապատու կաթողիկէին «կանթեղոց» բորբորումը կը յիշուի (80): «Նաւակատիք եկեղեցւոյ» լուցանել կու տայ «զկանթեղսն»: Եւ Եղիշէ կ'ըսէ Արքահամ խոստովանողի համար՝ թէ «իբրեւ զկանթեղ անշէջ կայր զամենայն գիշերս» (307), ուր «անշէջ» մակդիրը կը ցուցնէ անօթին լայն ընդունակութիւնը ու վառումը ձէթով, որով միայն կրնար երկար տեւել եւ անշէջ կոչուի: Իսկ համեմատութիւնը անհատի մը հետ՝ իր լոյսի մեծանկութեան զաղափարը կու տայ:

Կանթեղի նախկին ձեւը չենք գիտեր. Եթերեւս սկիզբները մեծ ճրագ մըն էր, եւ հետզհետէ գնդաճաւ, ինչպէս կը տեսնենք միջին դարուն: Զոր օրինակ Ն. Լամբրոնացիի աւետարանին մէջ, գրուած 1193 թուին (այժմ ի Ս. Ղազար), նկարուած կայ կանթեղ մը, կամարէ կախուած, որ կը նմանի լայն ու կարճ զրուաղեալ սափորի, գնդաձեւ փորով, եւ բերանն ու պատուանդանը լայն եւ հաւասար. ունի երեք ունելիներ՝ յարած վերին ագոյցին: Եւ բերնէն կ'ելլէ լեզուանման կարմիր բո-

(25) Դիւլէն, 513, 515, 517, 529, 537:

(26) Հայրաբոս. Լատին, ԻԳ, 345, 361:

(30) Դարեմբերգ, Ա., 869:

ցը: Ն. Շնորհալին իր Առակներուն մէջ երկինքը կը նմանցնէ տաճարին. «Եկեղեցին բարձր էր եւ լայն... կանթեղքն ի կախ անշուան» (Չափ. 570), ուր հայկականները չուանաւոր էին: «Պորհուրդ եւ կեղեցւոյ» ճառը կու տայ այս մանրամասնութիւնները. «կանթեղ բարձեալ ունի գլուխն եւ գծէքն եւ գլուխն... Ջուր ի նմին արկեալ, եւ ձէթ ի վերայ ծաւալեալ, եւ լոյս՝ որ դամենայն լուսաւորէ»: Ս. Ղազարու 1648ի Տաղարանը կը հաստատէ նոյն տարրերը, գրելով. «Մտիկ կանթեղին արա՝ որ հուրն ու ջուրն ու ձէթն է լարան» (387): Նախորդ ճառը կը շարունակէ՝ թէ կանթեղը «ընդ երկից ստեանցն (կարգա ստեղանցն) կախեալ» է որ էին երեք կարկառուն մասերը, որոնց կը յարէին «լարքն». եւ ամէնէն վեր «ճախարակն», որու վրայ կը խաղար վերամբարձ չուանը (488): Ստուար ու ծանր կանթեղները չունէին այդ շարժումը. ասոր համար թուրքացիները կը պատմէին թէ «Թերունի այր մի առեալ լապտեր ի ձեռս իւր, եւ ի վերին կամար եկեղեցւոյն, եւ վառեաց զմեծ կանթեղ եկեղեցւոյ»: Հոս վառուողը «լապտեր» է կամ կը կոչուի, ինչ որ Լամբրոնացին «խարոյկ» անուանեց:

Կան ցանցաւ յիշատակներ հին կանթեղներու: Այսպէս կը յիշուի Մտ. Ուռ-հայեցիէն «կանթեղն» որ կայր ի գումպէթ տաճարին» Պիպու վանքին, զոր կառուցած էր Գաղիկ Բ. Թագաւորը (221): Տիգրան Հոննց, 1215ին, Անիի Լուսաւորիչը, զոր ինքն իսկ շինեց, կը դարձաւ «կանթեղաւ ոսկի եւ արծաթի» (31): Նիկողոս Մառնոյն հաստատեց Գաղիկայն Ս. Գրիգորի պեղումներէն գտաւ արոյրէ կանթեղներ՝ աւետարանի պատմութիւններու ձուլածոյ տեսարաններով (32): Անկիւրիոյ վանքի յիշատակագրին մէջ, որ կը պահուի Ս. Ղազար, կը կարգանք՝ թէ 1469ին նուէր կը տրուի եկեղեցւոյն «երկու պղնձէ կանթեղ», եւ ուրիշ անձ մ'ալ կ'ընծայէ «եկե-

ղեցուն կանթեղանն չուանն» (63-64), որ իր կարեւորութիւնն ունի՝ նուիրուելու եւ յիշուելու չափ:

7. Լապտեր. - Յունական լապտեր բառն է, որուն Դարեմբերգի բառարանը կու տայ չորս նշանակութիւն. աշտանակ (կանդելաբրում), լապտեր (լանտեռնա), ֆրագ (լուկեռնա) եւ ջահ (փաքս. Գ. 914): Բայց հայերէնի մէջ այդ կոչումները ունին արդէն իրենց սեփական անունները, որով չենք կարող որոնել զանոնք մեր լապտերին մէջ, ուր կարելի է տեսնել նոյն իմաստներէն մէկը միայն, լանտեռնան, որ ճրագին բարդ ձեւն էր, իր ներսն ունենալով լոյսը (անդ՝ 925), եւ դիւրատար դառնալով ճանապարհի մէջ, ինչպէս էին Հոգեպետները՝ երբ ընդ առաջ ելաւ Յուդէի «լապտերօք արծաթեօք» (Ժ, 19) Աւետարանի տասը կոյսերունը, որոնց ձէթն ալ յիշուած է (Մտթ. ԻԵ.), եւ Յիսուսի ձերբակալութեան ժամուն Հրեաներու կրօնները, (Յճ. ԺԶ), ուր յոյն բնագիրը կը գրէ միշտ լապտա, եւ զոր Դարեմբերգի բառարանը ընդհանուր կոչում մը կը համարի լուսատու անօթներու (Գ, 914). Իսկ հայ թարգմանիչը կը մասնաւորէ դայն անփոփոխ լապտերով, ինչպէս կը պահանջէին յիշատակութիւններուն մէջ նկարուած տեղերն ալ: Սա կը գործածուէր նաեւ փակ վայրերու մէջ, ինչպէս էր Տրովադայի վերնատունը:

Հայ եկեղեցին եւս ընդունեցաւ դայն, եւ դրաւ Դ. դարէն Հոփիսիմեանց վկայարաններուն մէջ, ինչպէս տեսանք, եւ յետոյ կը յիշատակուին ուրիշներէ: Այսպէս յայտնի է Ղեւոնդի՝ Բագուանու Ս. Գրիգորի «պայծառութիւն լապտերացն». Օձնեցիի կարծուած «Օրհնութիւն նորաչէն եկեղեցւոյ» կը յիշէ ու կը մեկնէ «վառումն լապտերացն», եւ երկրորդ ճառը՝ «ղապտերացն լուսմունի» (129, 140): Ա. Լաստիվերտցին կ'անարկէ ընդհանուր կերպով «անշէջ լապտերացն եւ ջահիցն վառ-

ԲԱՐԱԿ ԵՒ ՍԱՀԼ ԻՊՆ ՍՆԲԱՏ

(ԷՋ ՄԸ ՄԵՐ ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԵՆՆՆ)

1951ին, Elma Marin արարեցին թարգմանելով հրատարակեց եւ ծանօթագրեց Ալ-Մուտալիմ Պաղտատի Խալիֆային տիրակալութեան շրջանին (833-842) պատմութիւնը, առնելով Ապու Ճաֆար Մուհամմատ Պ. Ճարիր Ալ-Տաբարիի ընդարձակ դործէն:

Տաբարիի կարեւորագոյն աղբիւրն է մեր պատմութեան մէկ էջին, այսինքն Բաբալի Հայաստանի ապաստանելուն, իր եղբոր հետ միասին, եւ Սահլ Իպն Մնբատէ՝ ալ-Աֆշին արաբ զօրավարին յանձնուելուն: Այս գէպը պատահեցաւ 837ին: Տաբարի, որ հեղինակն է արժէքաւոր պատմութեան մը, այս գէպէն գրեթէ երկու տարի վերջ ծնած ըլլալով, կրցեր է վտահալի տեղեկութիւններ հաւաքել եւ իր պատմութեան մէջ ընդգրկուել:

Տաբարիի պատմութիւնը ճոխ է Հայոց եւ Հայաստանի վերաբերող նիւթերով:

ման» հայ եկեղեցիներու մէջ (35): Եւ Ն. Լամբրոնացիին ընտանի են «լուցմունք ջահիցն եւ լապտերացն» (Պար. 131): Այդ բառը այս շրջանին կիրարկուած այդպէս միայնակ կամ ջահին հետ, անշուշտ կը նշանակէր այն իսկ՝ որ «կանթեղ» կոչուած է ուրիշներէ, եւ այս վկաններէն անշուշտ մնացած: Կ'ուզեմ ըսել կորուրած հին ձեւը, կամ լաւ եւս՝ գործածութիւնը եկեղեցւոյ մէջ, եւ անունը հոմանիշ դարձած միւսին հետ: Յիշեցինք մեծ կանթեղներու վառումը լապտերի լոյսով, ԺԵ. դարուն: Նոյն շրջանին լապտերն առած է մոմեղէնի նշանակութիւնն ալ:

Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ
(Շարունակելի)

սակայն եւ հոս միայն նկատի պիտի ունենամ Բաբալի Հայաստանի ապաստանելուն եւ յանձնուելուն մասը, որոնք դժբախտաբար մեր պատմիչները թէ՛ անկատար եւ թէ՛ սխալ ներկայացուցած են:

Տաբարի կը գրէ թէ Բաբալ պարտուեցաւ ալ-Աֆշինէ՝ Ատրպատականի մէջ. «Որուն վրայ, Բաբալ իր երկու եղբայրներուն հետ, Ապու Ալլահ եւ Մուալիեա, եւ իր մօր ու կիներէն մէկուն հետ, կոչուած ալ-Քալանդանիեա, ճամբայ ելաւ՝ թողլով ճանապարհը եւ երթալով գէպի Հայաստանի ուղղութեամբ»:

«Երկու հեծեալները եւ երկու լեռնականները (որոնք ճանապարհին վրայ կը հսկէին - Յ. Ք.) տեսան զանոնք եւ լուր գրկեցին Ապու Սաճի հրամանին տակ գրտնուող զօրքերուն, ըսելով. Մենք ձիաւորներ տեսանք՝ որ ասկէ անցան, սակայն չենք գիտեր թէ ով էին: Այն ատեն մարդիկ արշաւեցին եւ պնդեցին յառաջ, մինչեւ որ զանոնք (Բաբալը) տեսան հեռուէն. անոնք աղբիւրի մը մօտ կեցած էին եւ անոր վրայ կը ճաչէին: Բայց երբ Ան-հաւատը (Բաբալ) տեսաւ մարդիկը՝ ժամանակ չկորսնցուց. ան եւ իր հետեւորդները յառաջ ձիավարեցին եւ ան կրցաւ խուսափիլ. սակայն Մուալիեա եւ Բաբալի մայրն ու կիներ՝ որ անոր հետ էին՝ բռնուեցան: Բաբալին գերիներէն մին խուսափեցաւ: Ապու Սաճ գրկեց Մուալիեան եւ երկու կիները բանակատեղ, բայց Բաբալ գնաց իր գացած ուղղութեամբ, մինչեւ որ հասաւ Հայկական լեռները եւ հոն ճամբորդեց անշուշտ: Ան խիստ կարիք ունէր ուտեստի. սակայն բոլոր հայ ազնւականները կը հսկէին իրենց անմիջական մերձակութեանց եւ անոնց չըջակալքին վրայ, եւ իրենց պահակազօրքին հրամա-

(31) Աւելան Հ. Ղ. Շիրակ, 75:

(32) Արարատ ամս. 1911, 661-62: